

նի չի ծառայեր բայց եթէ երեւան հանելու առաջիններուն կատարած շարժման բացարձակ հանգամանքը, ինչ որ ժխտումը պիտի ըլլար չարժանեալու յարաբերականութեան վարկածին:

Այս առարկութեան վրայ է որ Այնլիքայն ըստիպուեցաւ ճշդել թէ վերոյիշեալ դիտումներու ցոյց տուած օրինակին մէջ դեր ունէր երազումի (աֆսէլէքսիսիս) դոյութիւնը եւ թէ հետեւաբար իրենց յարուցած խնդիրը այս կերպով դուրս կը մնար մասնակի յարաբերականութեան տեսութեան շրջանակէն:

Արդէն եթէ երազումի դոյութիւնը անհրաժեշտ եւ բաւարար պայմանն է շարժումն ժամացոյցներու առերեւոյթ յապաղումը իրականու-

թեան փոխելու, ոչ մէկ անհրաժեշտութիւն կայ որ այդ ժամացոյցը փոխէ իր արագութիւնը եւ վերադառնայ իր մեկնակէտին: Այդ բանին համար կը բաւէ պարզապէս որ առաջին ժամացոյցը Ա. կէտէն մեկնելով, որոշ ատեն մը ուղիղ գծով ճամբայ կտրելէ յետոյ զայ կանդ առնել Բ. կէտին վրայ, որպէսզի ան իրապէս յապաղման մէջ ըլլայ երկրորդ ժամացոյցի մը բաղդատմամբ, որ հաստատուած պիտի ըլլար նոյն այդ Բ. կէտին վրայ եւ առաջինն համեմատ լարուած, անոր մեկնումէն առաջ, այն երազումներուն պատճառաւ, զոր շարժման մէջ եղող ժամացոյցը պիտի կրէր իր ճամբայ ելած եւ կանդ առած պահերուն:

ՅՈՎՍԷՓ ՍՎԱՅՆՆԱ

ՊԱՏԳԱՍԱԲԵՐԸ

ՍԵՒԱՆ

Բընաս բարո՞ւմ, քաղցր իմ Սեւան, լիճ հայրենի,
Ես կը մեկնիմ քեզ չըտեսած, ջու ջուրերուդ
Ծաւի կարօտը սրտիս մէջ դեռ կ'արելնի.
Ճամբուս վրայ նորէն կ'իջնէ դիշերը մութ:

Այս առաւօտ մօտիկ ես դուն շատ աւելի,
Երբ կը թողում ամէն ինչ որ կը յօրինէր
Նայուածքիս դէմ աղուոր տեսիլքըդ պանծալի,
Ո՛վ ընծայուած լուսն սափոր երկիւնքն ի վեր:

Քեզմէ չըմպած կը հեռանամ ու կարծես թէ
Գինովի պէս կը մրմնջեմ անունդ Հիմա,
Գիշերին մէջ ո՞վ դաշխուրանդ իմ արծո՞թէ,
Արեւին տակ սիրոյ բաժակդ իմ շափուկայ...

Քեզմէ դատ ո՞վ, երբ պանդուխտի ճրագն իմ
աղօտ
Ա՛լ առկայծի, պիտի բերէ գերեզմանիս

Սըկիւն մը ջուր որ խաղաղի սիրտըս կարօտ,
Եւ արեւն այս անապատին չըխամըէ դիւ...

Քա՛ղցր իմ Սեւան, ապրիլ օրեր մայր հողին վրայ
Եւ չըտեսնիլ ջուրերդ, կղզիդ երազային...
Վերադարձիս մութը նորէն կ'իջնէ Հիմա,
Եւ կ'աւրժքիս տակ խաչուած յոյսերը կ'արելնին:

ՅԱԻՆԵՐԺՈՒԹԻՒՆ

Երբ կը յառիս, արթննալով առաւօտուն,
Դէպ ի կամարը բարձրացող արեգակին,
Երկրին վրայ քեզ արդար իշխան կը կարծես դուն,
Եթէ մինչեւ իսկ արտում է ջու խոնջ հողին:

Եթէ մինչեւ իսկ երազներ չըկան այլեւս,
Հին խառնաժառ տարիներու սուրբ կարօտներ,
Ու թաւամած շուշան մըն է սէրն ալ թ'րեւս՝
Որ ընդ երկար կեանքիդ պարտէզն է զարդարեր:

